ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի համաձայն:

2. Հաշվետվությունն ընդգրկում է 2014թ. օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակահատված):

3. Հաշվետու ժամանակահատվածում գործողության մեջ է եղել «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Ծրագիր): «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «եթե ծրագրի գործողության ժամկետը լրանալուց հետո նոր ծրագիր չի ընդունվում, ապա շարունակում է գործել նախորդ ծրագիրը», և «նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերությունները (ձեռնարկությունները) և «փոքր» օբյեկտները նոր ծրագրի մասն են վերջինիս ուժի մեջ մտնելու պահից»: Հաշվետու ժամանակահատվածում մասնավորեցման նոր ծրագիր չի ընդունվել:

4. Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1) «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուժը կորցրած են ճանաչվել Ծրագրի N1 ցանկի՝

ա. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ընկերությունների ցանկում 90049 ծածկագրով ընդգրկված՝ «Լազերային տեխնիկա» ՓԲԸ-ին վերաբերող տողը,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության ցանկը (ցանկում 90055 ծածկագրով ընդգրկված «Ստեփանավան» օդանավակայան» ՓԲԸ-ն):

5. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունել է Ծրագրում ընդգրկված պետական մասնակցությամբ 7 առևտրային կազմակերպությունների լուծարումից հետո մնացած գույքն աճուրդով մասնավորեցնելու մասին 7 որոշում, որից մասնավորեցվել է 2 առևտրային կազմակերպությունների լուծարումից հետո մնացած գույքը՝ «Հայավտոսերվիս» ՊՁ-ի «Ալավերդու ավտոտեխսպասարկում» ՊՓԲԸ-ի 710,3 մակերեսով անշարժ գույքը (վաճառքի գինը՝ 6,175 մլն դրամ) և «Ազաթ արտադրակոմերցիոն ֆիրմա» ՊՓԲԸ-ի 648 քմ մակերեսով անշարժ գույքը (վաճառքի գինը՝ 2,135 մլն դրամ):

6. Հաշվետու ժամանակահատվածում 3 օբյեկտ մասնավորեցվել է ուղղակի վաճառքի ձևով:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքար համայնքում գտնվող 950,4 քմ մակերեսով անշարժ գույքը (Ծրագրում ամրագրված՝ Ախուրյանի «Կարմրաքար» ճամբար (11906)) ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է Կարմրաքարի գյուղական համայնքին, երկրաշարժից հետո այնտեղ բնակություն հաստատած բնակիչներին՝ իրենց զբաղեցրած տարածքները նվիրելու պայմանով:

8. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գանձաքար համայնքում գտնվող՝ «Իջևանի կինոցանցի» (6111) «Գանձաքար» կինոթատրոնը մասնավորեցվել է Գանձաքարի գյուղական համայնքին (խորհրդանշական 1000 դրամ գումարով)՝ գույքը, որպես մշակութային կենտրոն, վերակառուցելու նպատակով՝ 3 տարվա ընթացքում 173 մլն դրամի ներդրումներ կատարելու պայմանով:

9. Հաշվետու ժամանակահատվածում մասնավորեցումից ստացված միջոցները կազմել են 178,352 մլն դրամ, որից ընկերությունների (ձեռնարկությունների), այդ թվում՝ ընկերությունների լուծարումից հետո մնացած գույքի մասնավորեցումից ստացված միջոցները՝ 141,410 մլն դրամ, նախորդ տարիներին մասնավորեցված «փոքր» օբյեկտներից հաշվետու ժամանակահատվածում տարաժամկետ վճարման ենթակա վճարումներից ստացված միջոցները՝ 36,942 մլն դրամ:

10. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի սեփականաշնորհման հաշվին մուտքագրվել է 144,150 մլն դրամ:

11. Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ 2014 թվականի ընթացքում մասնավորեցումից ստացված միջոցներից համայնքների բյուջեներ է փոխանցվել 34,202 մլն դրամ:

12. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված կարգով յուրաքանչյուր մասնավորեցվող ընկերության և գույքի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ինտերնետային կայքում հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

1. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

13. Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցման կատարողականը

1) Հաշվետու ժամանակահատվածում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 3 օբյեկտ:

2) Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված օբյեկտների և դրանց գնորդների ստանձնած պարտավորությունների մասին տեղեկությունները ներկայացված են սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող Հավելված 1-ում:

14. Մասնավորեցման գործարքների արդյունքում ստանձնած պարտավորությունների կատարողականը

1) Պետական գույքի մասնավորեցման պայմանագրերով 2014 թվականի ընթացքում ներդրումային և սոցիալական երաշխիքների ապահովման պարտավորություններ են ստանձնել 12 գնորդ: Գնորդների կողմից պայմանագրերով ստանձնած ներդրումային պարտավորությունները կազմել են 105,0 մլն ՀՀ դրամ և 4,270 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, իսկ սոցիալական երաշխիքների ապահովման մասով նախատեսվել է ստեղծել 47 աշխատատեղ:

2) Նախատեսված ներդրումային պարտավորությունները կատարել են 5 գնորդ, դրանք կազմել են 12,520 մլն ՀՀ դրամ և 3 083 932 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

3) Սոցիալական երաշխիքների ապահովման մասով ստեղծվել է 52 աշխատատեղ:

4) Հաշվետու ժամանակահատվածում ստանձնած ներդրումային պարտավորությունների կատարման վերաբերյալ 1 գնորդ ներկայացրել է 3 970 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով ներդրումային պարտավորությունների կատարմանը վերաբերող փաստաթղթեր, որոնք գտնվում են գնահատման փուլում:

5) Նախատեսված ներդրումները չեն կատարել 5 գնորդ, որը կազմել է 93,5 մլն ՀՀ դրամ: Մեկ գնորդ նախատեսել էր ավարտել օբյեկտի շինարարական աշխատանքները, որոնք չեն կատարվել:

6) Մասնավորեցված օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին տեղեկությունները, ըստ առանձին ընկերությունների և օբյեկտների, ներկայացված են սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող Հավելված 2-ում:

15. Ընկերությունների լուծարման և սնանկացման գործընթացը

1) «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընկերությունները չմասնավորեցվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է կայացնում այդ ընկերությունների լուծարման մասին:

2) Լուծարված ընկերությունների գույքը կարող է մասնավորեցվել «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ որպես գույքի առանձին տարրեր, այդ գույքի կամ դրա մի մասի հիման վրա նոր ընկերություն ստեղծելու միջոցով, ինչպես նաև տրամադրվել կարճաժամկետ կամ երկարաժամկետ վարձակալության:

3) Հաշվետու ժամանակահատվածում լուծարման գործընթացում է գտնվել Ծրագրում ընդգրկված 18 առևտրային կազմակերպություն:

4) Հաշվետու ժամանակահատվածում նշված կազմակերպություններից՝

ա. 5 կազմակերպության լուծարման գործընթացն ավարտվել է,

բ. 3 կազմակերպություն ճանաչվել է սնանկ:

5) Հաշվետու ժամանակահատվածում լուծարվող կազմակերպություններում մարվել է շուրջ 146,525 մլն ՀՀ դրամ կրեդիտորական պարտք, որից Հայաստանի Հանրապետության

պետական բյուջե՝ 76,432 մլն ՀՀ դրամ, համայնքային բյուջե՝ 9,732 մլն ՀՀ դրամ, աշխատավարձի գծով՝ 53,856 մլն ՀՀ դրամ և այլ կրեդիտորական պարտք՝ 6,505 մլն ՀՀ դրամ:

6) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի թիվ 900005029039 «Լուծարվող պետական փակ բաժնետիրական ընկերությունների հաշվարկային հաշիվներում մնացած դրամական միջոցների հավաքագրում» եկամտային հաշվին փոխանցվել է 3,207 մլն ՀՀ դրամ, ոչ պետական բաժնեմասի սեփականատերերին, որպես լուծարային արժեք, փոխանցվել է 0,258 մլն ՀՀ դրամ, իսկ 0,221 մլն ՀՀ դրամ դեբիտորական պարտքի ստացման իրավունքը վերապահվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

7) Հաշվետու ժամանակահատվածում լուծարման և սնանկացման գործընթացի մասին տեղեկությունները ներկայացված են սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող Հավելված 3-ում:

2. «ՓՈՔՐ» ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ

16. «Փոքր» օբյեկտների մասնավորեցման կատարողականը

1) Համաձայն Ծրագրի 5-րդ հոդվածի՝ մասնավորեցման նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված «փոքր» օբյեկտները համարվում են Ծրագրի մաս և ենթակա են մասնավորեցման «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2) Հաշվետու ժամանակահատվածում «փոքր» օբյեկտ չի մասնավորեցվել:

3) Նախորդ տարիներին մասնավորեցված «փոքր» օբյեկտներից հաշվետու ժամանակահատվածում տարաժամկետ վճարման ենթակա վճարումներից ստացված պետական բյուջեի եկամուտները կազմել են 36,941 մլն դրամ:

Հավելված 1

Տ Ե Ղ Ե Կ Ու Թ Յ Ու Ն Ն Ե Ր
հաշվետու ժամանակահատվածում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված օբյեկտների մասին

Հ/Հ	Ընկերության (պետական գույքի) անվանումը, ծածկագիրը՝ ըստ Ծրագրի	Գտնվելու վայրը	Պետական կառավարման մարմինը	ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Պետական գույքի գնահատ-ված արժեքը (հազ. դրամ)	Վաճառ-քի գինը (հազ. դրամ)	Ընկերության հաշվեկշռում ամրագրված պարտա-վորություն-ները (հազ. դրամ)	Ներդրումային պարտավորու-թյունների և սոցիալական երաշխիքների մասին՝ ըստ մասնավորեցման պայմանագրի	Մասնավո-րեցման պայմանագրի կնքման ամսաթիվը	Գնորդը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

1.	«Գուգարք» կարի ԱՄ-ի (62357) կազմից առանձնացված «Դարպասի արտադրամաս» (2197.45 քմ մակերեսով գույք և 0.448 հա հողամաս)	Լոռու մարզ, գ.Դարպաս	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 27-ի N 780-Ա որոշում	30481	15000	չունի	2014-2015 թվականներին կատարել 2 մլն դրամի ներդրումներ՝ յուրաքանչյուր տարի հավասարաչափ: 2014 թվականի մայիս ամսվանից առնվազն 5 տարի ժամկետով ապահովել արտադրամասի գործարկումը, ինչպես նաև առնվազն 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր տարի առնվազն 6 ամիս ժամկետով ստեղծել 20 աշխատատեղ՝ առնվազն 60 000 դրամ ամսական աշխատավարձով	03.02.2014 թ.	«ՎԱԲԱ» ՍՊԸ

2.	«Իջևանի կինոցանցի» (6111) «Գանձաքար» կինոթատրոն (540.9 քմ մակերեսով շենք և 0.0855 հա մակերեսով հողամաս)	Տավուշի մարզ, Գանձաքար համայնք, 28 փող., N 11	ՀՀ մշակույթի նախարարություն	ՀՀ կառավարության 2013 թ. օգոստոսի 29-ի N942-Ա որոշում	12680	1	չունի	3 տարվա ընթացքում՝ սկսած 2014 թվականից, կատարել 173 մլն դրամի ներդրումներ, ընդ որում՝ ա. առաջին տարում՝ 113 մլն դրամ, բ. երկրորդ տարում՝ 40 մլն դրամ, գ. երրորդ տարում՝ 20 մլն դրամ	17.02.2014 թ.	Տավուշի մարզի Գանձաքար գյուղական համայնք
3.	Ախուրյանի «Կարմրաքար» ճամբար (11906) (950.4 քմ մակերեսով անշարժ գույք և 4491.1 քմ մակերեսով հողամաս)	ՀՀ Շիրակի մարզ, Կարմրաքար համայնք 1-ին փող. N 1	ՀՀ կառավարու-թյանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2013 թ. հոկտեմբերի 3-ի N1077-Ա որոշում (փոփոխություն՝ ՀՀ կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի N765-Ա)	14873	200	չունի	6-ամսյա ժամկետում նշված հասցեում բնակվող բնակիչների հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել իրենց զբաղեցրած տարածքների նվիրատվության պայմանագրեր	12.09.2014 թ.	Հայաստանի Հանրապետու-թյան Շիրակի մարզի Կարմրաքարի գյուղական համայնք

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

մասնավորեցված ընկերությունների և անավարտ շինարարության օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին

Հ/Հ	Մասնավորեցված գույքի և գնորդի անվանումը	Նախատեսված պայմանագրային պարտավորությունները	Կատարման ժամկետը	Կատարման ընթացքը
1	Ճամբարակ քաղաքի Գ. Նժդեհի փող. թիվ 73 հասցեում գտնվող 1193.4 քմ մակերեսով Կրասնոսելսկի կինոցանցի «Ճամբարակ» կինոթատրոն Գնորդ՝ Սոս Սոսյան ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ճամբարակ, Գետափնյա 41 Պայմանագիր՝ 294-Մ 10.05.2012 թ.	Կատարել 10,0 մլն ՀՀ դրամի չափով ներդրում	10.05.2014 թ.	Կատարվել է 10,0 մլն ՀՀ դրամի չափով ներդրում:
2.	«Դվին» հյուրանոցային համալիր» ՓԲԸ ք. Երևան, Պարոնյան 40 Գնորդ՝ «Սի Սի Ձի Կովկասյան կոմունիկացիոն խումբ» ՓԲԸ ք. Երևան, Սարյան 20 Պայմանագիր՝ 686-Ու 14.05.2004 թ.	Կատարել 3, 970 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով ներդրում	31.12.2014 թ.	Ներկայացված փաստաթղթերի հիման վրա իրականացվում է պարտավորությունների գնահատում:
3.	Վանաձոր քաղաքի Մաշտոցի թիվ 1 հասցեում գտնվող՝ 5264,74 քմ մակերեսով «Վանաձորի հյուրանոց» ԱՇՕ Գնորդ՝ Սամվել Գրիգորյան Գուգարքի շրջ., գ. Գուգարք, 10-րդ փող., տուն 27ա Պայմանագիր՝ 859-Ու 20.01.2009 թ.	Ստեղծել 20 աշխատատեղ	20.01.2014 թ.	Ստեղծվել է 21 աշխատատեղ:
4.	«Ռեմդիզել» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ Գնորդ՝ «Բիզնես Լայն» ՍՊԸ ք. Երևան, Նոր-Արեշի 24 փ., տուն 29 Պայմանագիր՝ 857-Ու 23.08.2008 թ.	Կատարել 25,0 մլն ՀՀ դրամի չափով ներդրում	25.08.2014 թ.	Ներդրումները չեն կատարվել: Հաշվարկվել է 5,0 մլն ՀՀ դրամի տուգանք, որը չի վճարվել: ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը հայց է ներկայացրել դատարան:
5.	Երևան քաղաքի Աճառյան փող. 2-րդ նրբ. թիվ 4/1 և 4/2 հասցեներում գտնվող 4256.6 քմ ընդհանուր մակերեսով տարածք Գնորդ՝ «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ ք. Երևան, Աճառյան փ. 2, նրբ. 4 Պայմանագիր՝ 867-Ու 30.01.2013 թ.	Կատարել 300,0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով ներդրում	31.12.2014 թ.	Կատարվել է 3 083 932 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրում:
6.	«Քաղաքաշինության գիտահետազոտական և նախագծային ինստիտուտ» ԲԲԸ-ի 100 % բաժնետոմսեր ք. Երևան, Դավիթ Անհաղթի 23 Գնորդ՝ Աղավնի Մինասյան	Կատարել 500,0 հազ. ՀՀ դրամի ներդրում, ստեղծել 7 աշխատատեղ 60 հազ.	19.02.2014 թ.	Կատարվել է 519,0 հազ. ՀՀ դրամի ներդրում, ստեղծվել է 7 աշխատատեղ 60 հազ. ՀՀ դրամ

	Պայմանագիր՝ 295-Մ 05.02.2013 թ.	ՀՀ դրամ միջին աշխատավարձով		միջին աշխատավարձով:

7.	ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղի 45 փող. N 1 հասցեում գտնվող «Իջևանի ծխախոտի ֆերմենտացիոն գործարան» ՊՓԲԸ-ի լուծարումից հետո մնացած գույք Գնորդ՝ Լիլիթ Մարդանյան Պայմանագիր՝ 868-Ու 04.06.2013 թ.	Կատարել 8,0 մլն ՀՀ դրամի չափով ներդրումներ	04.06.2014 թ.	Ներդրումները չեն կատարվել, հաշվարկվել է 1 200 000 ՀՀ դրամի տուգանք, որը չի վճարվել: ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը հայց է ներկայացրել դատարան:
8.	ՀՀ Լոռու մարզի Գարգառի գյուղական համայնքի Կենտրոնականի թիվ 4 հասցեում գտնվող Ստեփանավանի կարի ԱՄ-ի արտադրական տեղամասի 579,5 քմ մակերեսով ԱՇՕ Գնորդ՝ Պավլիկ Զալինյան Լոռու մարզ, գ. Գարգառ Կենտրոնականի 6 Պայմանագիր՝ 296-Մ 16.07.2013 թ.	Կատարել 500,0 հազ. ՀՀ դրամի չափով ներդրումներ	16.07.2014 թ.	Ներդրումները չեն կատարվել, հաշվարկվել է 100,0 հազ. ՀՀ դրամի տուգանք, որը վճարվել է: ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը հայց է ներկայացրել դատարան:
9.	«Հանրախանութ» ԱՇՕ ք. Երևան, Նորաշեն թաղամաս Գնորդ՝ Մերուժան Իսոյան Պայմանագիր՝ 620-Ու 03.12.2003 թ.	Կատարել 30,0 մլն ՀՀ դրամի չափով ներդրումներ	31.12.2014 թ.	Ներդրումները չեն կատարվել, գտնվում է հայցապահանջի նախապատրաստման փուլում:
10.	Գյումրի քաղաքի Սավոյան 7 հասցեում գտնվող ՀՊՃՀ-ի Գյումրու մասնաճյուղի ուսումնալաբորատոր մասնաշենքի ԱՇՕ Գնորդ՝ Մակի Փանոսյան Պայմանագիր՝ 246/1-Մ 22.07.2008 թ.	Կատարել 30,0 մլն ՀՀ դրամի չափով ներդրումներ	27.07.2014 թ.	Ներդրումները չեն կատարվել, հաշվարկվել է 6,0 մլն ՀՀ դրամի տուգանք, որը չի վճարվել: ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը հայց է ներկայացրել դատարան:
11.	Հրազդան կինոցանցի գույքի կազմից առանձնացված «Ծաղկաձոր» կինոթատրոնի գույք Գնորդ՝ «Կինոթատրոն Մոսկվա» ՍՊԸ Պայմանագիր՝ 735-Ու 21.02.2005 թ.	Շինարարական աշխատանքներն ավարտել մինչև 2015 թվականը	31.12.2014 թ.	Չի կատարվել: ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը հայց է ներկայացրել դատարան:
12.	«Գուգարք» կարի ԱՄ-ի կազմից առանձնացված «Դարպասի արտադրամաս»-ի 2197,45 քմ մակերեսով գույք Գնորդ՝ «ՎԱԲԱ» ՍՊԸ Պայմանագիր՝ 870-0 03.02.2014 թ.	Կատարել 1,0 մլն ՀՀ դրամի ներդրումներ, ստեղծել 20 աշխատատեղ՝ 60,0 հազ. ՀՀ դրամ աշխատավարձով	31.12.2014 թ.	Կատարվել է 2 000 644 ՀՀ դրամի ներդրում, ստեղծվել է 24 աշխատատեղ՝ 60,0 հազ. ՀՀ դրամ աշխատավարձով:

Տ Ե Ղ Ե Կ Ու Թ Յ Ու Ն Ն Ե Ր

հաշվետու ժամանակահատվածում լուծարման և սնանկացման գործընթացի մասին

Հ/Հ	Ծածկագիրը՝ ըստ Ծրագրի	Ընկերության (կազմակերպության) անվանումը	Հիմնադիրը	Լուծարման մասին ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Լուծարման ընթացքը
1	2	3	4	5	6
1.	60351	«Գյումրիի քաղաքային կառույցների ուղեմաս» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի N 1610-Ա որոշում	Սնանկ:
2.	60216	Գորիսի հրուշակեղենի ՊՁ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 10-ի N 137-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
3.	62392	«Վարդենիսի գյուղ. կենդանիների արհեստական սերմնավորման կայան» ՊՁ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 10-ի N 137-Ա որոշում	Լուծարված:
4.	5328	Իջևանի գլխավոր պանրագործարան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 23-ի N 348-Ն որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
5.	11039	Փոքրաշենի բտման տնտեսություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 23-ի N 348-Ն որոշում .	Գտնվում է լուծարման գործընթացում:
6.	11050	Արտամետի կերերի արտադրության տնտեսություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 23-ի N 348-Ն որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:

7.	60153	«Երառսպասարկում» ՓԲԸ-ի արտադրական և սովորողների Մ/Ս թիվ 7 ԴՁ	«Երառսպասարկում» ՓԲԸ (բաժնետոմսերի տնօրինման լիազորությունը պատկանում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը)	ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 23-ի N 348-Ն որոշում .	Գտնվում է լուծարման գործընթացում:
8.	62136	«Զրհոս» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 25-ի N 117-Ն որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
9.	20376	«Գագարինի արտադրական բազա» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի N 838-Ն որոշում	Լուծարված:
10	90006	«Նոր ներդրումներ» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 227-Ա որոշում	Լուծարված:
11	62079	«Ազրոնավթաբազա» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 997-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
12	90036	«Գեոկոմպլեքս» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 997-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
13	21425	«Վարդենիսի տպարան» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1172-Ա որոշում	Լուծարված:

14	90035	«Էկոսերվիս» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 929-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
		«Էկոսերվիս» ՓԲԸ-ի «Գեոմատակարար» ԴՓԲԸ			Գտնվում է լուծարման գործընթացում:
15	62403	«Դրոյի անվան	ՀՀ կառավարությանն	ՀՀ	Լուծարված:

		մարզամշակութային կենտրոն» ՊՓԲԸ	առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 209-Ա որոշում	
16	62407	«Լուսմատ» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 95-Ա որոշում	Սնանկ:
17	90039	«Երևորոգնախագիծ» ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 836-Ա որոշում	Սնանկ:
18	62061	«Գրանիտ» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1379-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում: